Վեհափառ Հայրապետը ընդունելով Գօրի քաղաքի Յաջորդ Բարեշնորհ Յովհաննէս վարդապետի հրաժարականը, ազատ համարեց նորան իւր պաշտօնից և նշանակեց Շահնաբաթի վանքի վանահայր, որի միաբան ձեռնադրուած է նա։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Գալֆայեան որբանոց.—Կ. Պոլսի Խասգիւղ անուն արուարձանում, Հայոց դպրոցի հանդէպ, մի ընդարձակ պարտէզի մէջ կառուցուած է մի որբանոց, որի հիմնադիրն եղել է բարեյիշատակ մայրապետ Սրբուհի Գալֆայեան։ Սա կարծէք Ե. դարու անձնազոհ հայուհիների վերջին շառաւիղներից մին լինէր։ 1866-ին, երբ նա հիմը դրաւ այդ հաստատութեան, տուել իր ջանքերի, իր զոհաբերութիւնների վրայ էր վստահ քան մեծաքանակ գումարների, որ չունէր։ Եւ սակայն հիմնեց նա այդ ազգային տունը՝ այնտեղ պատսպարելու համար անտերունչ հայ որբուհիներ, որոնց արտասուքին հանդուրժել չէր կարողանում։ Նորան աջակցեցան ժամանակակից պատրիարքն ու Հայ հասարակութիւնը՝ առաջինն իր շրջաբերականով, երկրորդը նիւթական օժանդակութեամբ։ Սրբուհի մայրապետը գրաւեց և երկրի այն ժամանակուայ Վեհապետի ուշադրութիւնը, որի արդիւնքն եղաւ հացի և մսի ամենօրեայ նպաստ, որ մինչև օրս էլ ստացուում է։ Որբերի թիւը հիմնադիր մայրապետի օրով բարձրացել է մինչև 27, որոնց խնամելու համար չէր բաւականանում այն եկամուտը, որ ստացուում էր, և ահա անձնազոհ մայրապետն ընկնում է պարտքի տակ, որի գումարն իր օրով հասնում է մինչև 46000 ղուրուշի (3680 ր.)։ Հիմնադիրն ինչ որ կարող էր անել անում էր. անշուշտ կը կամենար նա և այդ պարտքը վերացնել մէջտեղից, բայց չկարողացաւ։

Նրա մահից ի վեր անց է կացել 13 տարի, և որբուհիների թիւը քանի գնում աւելանում է։ Ներկայ մայրապետը՝ Երանուհի Յովհաննէսեան, արժանաւոր յաջորդն հիմնադրի, վերջերս «Սուրհանդակում» հրատարակել է մի նաւակ, որից ե-

բևում է որ այս վերջին տարիների ընթացքում, ձախող հանգամանքների բերմունքով, որբերի թիւը բարձրացել, հասել է մինչև 60-ի, իսկ պարտքը՝ 60—70 հազար ղուրուշի (4800—5600 ր.): Մի հաստատութիւն, որ բարեկիրթ և նախնական կրթութեան տէր հայ մայրեր է պատրաստում տաճկահայ հասարակութեան համար, մի հաստատութիւն, որ դեռ մինչև օրս պահում է իր գոյութիւնը աւելի մուրացկանութեամբ քան հաստատուն եկամուտների շնորհիւ, ընկճուում է հետզհետէ պարտքի տակ: Արդեօք Հայ մարդիկ այնքան թոյլ, այնքան անտարբեր պիտի գտնուին, որ ազգային այդ տունը ստիպուած լինի փակել իւր դռները հայ որբուհիների երեսին և կամ փոխանակ 60-ի պարտքապարէ 20—30 հոգի մեայն: Պատրիարքարանը Երանուհի մայրապետի գործը դիւրացնելու և գործին աւելի մօտից հսկելու համար՝ իր կողմից նշանակել է երկու խնամակալ, որոնք անշուշտ ամէն ջանք գործ կը դնեն՝ յարատև դարձնելու այդ ազգօգուտ հաստատութեան գոյութիւնը:

— Այնթապի որբանոցը, ուր խնամուում են 40-ի չափ անչափահաս մանուկներ, նիւթական անձուկ վիճակի մէջ է գտնուում: Նպաստը, որ տալիս էր Կ. Պոլսի պատրիարքարանը, դադարել է: Հոգաբարձութիւնը Պատրիարքարանից թախանձագին նպաստ է խնդրում:

— Մայիսի 25-ին Զիլէում տեղի է ունեցել հանդիսաւոր ընթերցումը մի կայսերական հրովարտակի, որով արտօնուած է քաղաքի Հայ Հասարակութեան՝ մի դպրոց կառուցանել իրանց մանուկների համար: Հրովարտակի ընթերցման յաջորդ օրը՝ կիրակի մայիսի 26-ին, տեղի է ունեցել հիմնարկէքի հանդէսը՝ թեմական առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոսի նախագահութեամբ:

—Կ. Պոլսի Ազգային հիւանդանոցի հոգաբարձութիւնը կազմել է մի յանձնաժողով, որի պաշտօնն է լինելու քննել հիւանդանոցի բոլոր կալուածների վիճակը, նրանց կալուածագրերը, և այս մասին մի տեղեկագիր ներկայացնել հոգաբարձութեան: Հոգաբարձութեան նպատակն է մի անգամ ընդ միշտ ապահովել նոյն հաստատութեան յատուկ կալուածները՝ օրինական միջոցներով:

—Բաղէշից հետևեալն են գրում «Սուրհանդակ»-ին՝ յունիս 25 թուով. «Քաղաքիս ազգայնոք ցաւալի կորուստ մ՝ ունեցան յանձին Հովիկեան մահտ. Ղարիպեան ազգայի, որ ամսոյս 12-ին մեռաւ 98 տարեկան: Բարեսէր քրիստոնեայ մըն էր հանգուցեալը, որ կէս դարէ ի վեր իւր նիւթական կարողութեան մէկ մասը՝ կարո-

տեսչներն սխալվելու, բարենպատակ հատատուութեանց սատարելու յատկացուցած և Կայս. կառավարութեան ալ գնահատման արժանանալով՝ Սանիէի ատենանովը պատուուած էր։ Երեք անգամ Ս. Երուսաղէմ դացած էր և իւրաքանչիւր անգամուն 20-ական ոսկի նուիրելէ զատ՝ վերջերն Երուսաղէմի ս. Պատրիարքին տրամադրութեանը տակ դրած էր 500 օսմ. լիրա։ որու տարեկան տոկոսը՝ աւելի քան 50 ոսկի։ յատկացուած է ժառանգաւորաց վարժարանին։ Քաղաքիս Գոմաց ս. Աստուածածին վանքին ուխտաւորաց յատուկ մէկ քանի սիրուն ոեներակները։ և վարժարանը մանաւանդ՝ իր բարեգործ և օրհնեալ վաստակոց արդիւնք են։ Արդէն ասկէ առաջ տարեկան մօտ 20 ոսկի եկամուտ ունեցող 1—2 կրպակ և փուռի մը կէս բաժինը թողուցած էր այդ մենաստանին։ Խնդրակատարի վանքի որբանոցին մէջ ալ որդեգրած էր սան մը։ որու համար տարեկան հինգական ոսկի վճարեց։ Կիմանանք թէ հանդուցեալը իր կենդանութեանը պատրաստած կտակովը և մէջ այլոց կարևոր գումար մը յատկացուցած է քաղաքիս աղքատիկ ուսանողներուն և որբերուն։ . . . . Հանգուցեալի մարմինը ամփոփուեցաւ Գոմաց Ս. Աստուածածնի վանքին շրջափակ պարտէզին մէջ։ եկեղեցւոյն արևելեան որմին ստորոտը։

— Յուլիս 17-ին Ղսլաթիայում գումարուած Նպաստից յանձնաժողովը զբաղուած էր և մինչի այլոց հետևեալ խնդիրներով.

1. Գաւառներից խնդիրներ էին մատուցուած 23 գիւղական նոր դպրոցներ բաց անելու համար։ յանձնաժողովը նկատելով։ որ Նպաստից սնտուկի դրամական միջոցները չեն ներում այս խնդրուածքներին դոհացում տալու։ թողեց աւելի յարմար առթի։

2. Մարաշի Եէնիճէ—Գալէ գիւղում սատիկ կարկտից ժողովուրդը վնասուած լինելով օգնութիւն էր խնդրել։ յանձնաժողովի որոշումով 20 ոսկի է ուղարկուելու կարօտեալներին։

3. Դիարբէքիրի Ջիղրէ գիւղի եկեղեցու նորոգութեան համար Նպաստ խնդրուած լինելով՝ որոշուեցաւ Դիարբէքիրի առաջնորդին յանձնարարել։ որ գործն ստուգէ և տեղական միջոցներով կարելի եղածը գործ դնելով՝ յայտագրէ արդիւնքը։

Միւս խնդիրները։ որ զանց արինք արձանագրել։ զանազան որբանոցների շուրջն են դառնում։ Ջանք է գործ դրուում, որքան կարելի է։ խնայողութեամբ վարուելու նիւթական միջոցների մատակարարութեան գործում։

— Ս. Պատրիարքը մի օրհնութեան գիր է ուղարկել հանրածանօթ բարերար Պ. Ա. Մանթաշեանցին։ որի ծախսով շինուում է Պարիզում Հայոց եկեղեցի։

— Իբրայիլում (Ռումինիա) գտնուող Շաբին Կարահիսարի Բուսէյա գիւղից գաղթած հայերը իրանց մէջ 200 ֆր. հաւաքելով՝ ուղարկել են Պատրիարքարան, իրանց գիւղի ս. Գէորգ եկեղեցու նորոգութեան համար։

— Ռուսաստանից Տիկին Վառվառէ Քանանեան Ս. Պատրիարքին ուղարկել է որբանոցների օգտին 600 բուբլի, որը շահել էր Ա. Ահարոնեանի գրուածների հրատարակութիւնից։

— Բրուսացի պղնձի վաճառական Պ. Յովհաննէս Պատեան և կինը՝ Տիկին Թագուհի, իրանց զաւակների մահուան առթիւ հոգւով սփոփուելու համար՝ Կ. Պոլսի Ազգային հիւանդանոցին նուիրել են երկու տուն, որ գտնուում են Պոլսի Կում Կապու կոչուած հայաշատ թաղում և բերում են տարեկան 48—50 ոսկի վարձք, իսկ տների արժողութիւնն է գրեթէ 600 ոսկի։

— Մուշի Ս. Կարապետ վանքի տնօրէն խորհուրդը գրում է Պատրիարքարանին, որ ժառանգաւորաց դպրոցի քննութիւններն աւարտած են։ Դպրոցն անցեալ տարի տուել է 9 շրջանաւարտ, որոնք զանազան տեղերում ուսուցիչ են։ Այժմ դպրոցն ունի 62 աշակերտ, որոնցից 28-ը որբ են։ Սրանց ուտեստը վանքն է տալիս։ Պատրիարքարանից ստացուում է միայն ամսական 5 ոսկի, որ տրուում է ուսուցիչներին։

— Տրապիզոնցի Յովակիմ Թոփնաքալեան անուն ամուրի անձը որ 5—6 տարի առաջ իր ամբողջ հարստութիւնը՝ 400 ոսկի, օրինական ճանապարհով կտակել էր Կ. Պոլսի Ազգային հիւանդանոցին, վերջերս կնքել էր իր կեանքը Բէրութի Գերմանական հիւանդանոցում։ Հանգուցեալն իր օրհասական ժամին կանչել է իր մօտ Բէրութի հոգևոր տեսուչ Ներսէս վ. Խաչատեանին և խնդրել է որ կտակը նոյնութեամբ ի կատար ածուի իր մահից յետոյ։

— «Բիւզանդիոնի» մէջ կարդում ենք հետևեալը՝ գրուած Մարաշից. «Յունիս 10-ին կիրակի առաւօտուն ժամհարեանց որբանոցին մրցանակներու բաշխման հանդէսը տեղի ունեցաւ, նախագահութեամբ Մարաշի Առաջն. Տեղապահ Տ. Յովհաննէս Աւագ քահ. Վարժապետեանի։ Ներկայ էին 2000 է աւելի հանդիսականներ։ Հանդէսի ժամանակ որբերէն մին գեղեցիկ բառերով երախտագիտութիւն յայտնեց ժամհարեան բարեգործ եղբայրներուն և մաղթանքներ ըրաւ անոնց արևշատութեան համար։ 27 տաներ մրցանակ ստացան, ոմանք բարի վարուց և ոմանք արհեստի մէջ իրենց յաջողութեան համար»։

— Ներկայ տարուայ Վարդավառի տօնին Երուսաղէմի

միաբաններեից ուրբ սարկաւագ ձեռնադրուել են աբեղայ՝ Ամենապատիւ Տ. Յարութիւն Սրբազան Պատրիարքից։

— Կեսարիոյ Որբանոցի և ժառանգաւորաց վարժարանի աշակերտներից երեք հոգի փափաք են յայտնել կուսակրօն սարկաւագ ձեռնադրուելու։ Այս առթիւ առաջնորդ և վանահայր Տէր Տրդատ եպիսկոպոս Պալեան դրած է Պոլսի Պատրիարքարանին, որը պահանջել է ընծայացուների անուններն ու ընծայագրերը՝ կարգադրելու համար հարկ եղածը։

ՊԱՐԱԿԱՀԱՅՔ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆ—ՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ

ՏՈՒԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ

Ի ԴԱՎՐԷԺ

Տեղի կնքող

Լոյսդ Աշտանակի Հոգւոյս, Բանալիդ դրանց յաղթութեանս, Պտուղդ ծառոյն բաղդի Արքայութեանս, Բարեբաղդ բարեկիրթ որդեակ իմ անղուգական Մուհամէդ—Ալի Միրզա, Թագաժառանգ յարատեւ պետութեանս, Իշխողդ Ատրպատական աշխարհի, Արքայավայել սիրոյ սրտիս արտայայտութեան սիրելւոյդ՝ յայտ լիցի.

Որպէս յայտարարեալ է Մասնակիցն Արքայութեան Նորին Սրբութիւն, Մեծն ի Մեծամեծս Քրիստոնեայ Հոգևորականութեան Մկրտիչ Եպիսկոպոսապետ Եպիսկոպոսաց Ս. Էջմիածնի, Նախարարութեան Արտաքին գործոց, եթէ ի քրիստոնեայ վարդապետաց զեղիշէ Ծ. վարդապետ